ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

« » _____ 2020թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____ հեռ. (0312)

3-26-10

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
(ք.Երևան, Փավստոս Բուզանդի 1/3
Էլ.հասցեն՝ sh.doydoyan@icloud.com)

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի լրումն մեր 30.07.2020թ. N01/08384-2020 գրության՝ հայտնում ենք, որ Ձեր 28.07.2020թ. N345-93 գրությամբ պահանջվող տեղեկատվությանը պարզաբանում տալու նպատակով մեր կողմից ՀՀ Շիրակի մարզի համայնքների ղեկավարների շրջանում անցկացվել է համապատասխան հարցում:

Համայնքների ղեկավարների կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ համայնքներում չսահմանված ու չնախատեսված տեղերում և վայրերում աղբամուղներից, աղբահավաք խցերից, աղբարկղերից, աղբամաններից կամ աղբահավաք մեքենաներից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված կամ նախատեսված փոխաբեռնման կայաններից կամ աղբավայրերից դուրս աղբ թափելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված դրույթներով ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ վերջին հինգ տարիների ընթացքում վարչական տույժեր չեն կիրառվել:

25.08.2020

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
/փոխարինող/

Քաղաքաշինության վարչություն
Կատարող՝ Տ.Հարությունյան
Հեռ. (0312) 49000*149